ԱՄԱՐԱՆԱՏԱՐՏ

Արմենուհի Նշանի Ղազարյան

ԱՊԱՐԱՆԱՄԱՐՏ

ԵՐԵՎԱՆ
Հեղինակային հրատարակություն
2017

ՀՏԴ 821. 19-94 Ղազարյան
ԳՄԴ 84 (5Հ)-4
Ղ 158

Ղազարյան Ա. Ն.
Ղ 158 Ապարանամարտ/ Ա. Ղազարյան.- Եր.:
Հեղ. հրատ., 2017. - 120 էջ:

Գիրքն ընդգրկում է անցյալ դարի 90-ականների Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի բովով անցած Ապարանի ջոկատի և պատերազմում անմահացած ապարանցի հերոս ազատամարտիկ Նահապետ Տոնոյանի (Ֆեդայի) կենսագրական ուշագրավ դրվագները, որոնք համեմված են գեղարվեստական նկարագրություններով:

Ռազմիկ Պետրոսյանի հրամանատարությամբ այսօր Ապարանի ջոկատը դարձել է գունդ, և ամեն պահ պատրաստ է պաշտպանել մեր արժանապատվությունն ու անվտանգությունը:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 821. 19-94 Ղազարյան
ԳՄԴ 84 (5Հ)-4

ISBN 978-9939-0-2186-7 © Ղազարյան Ա., 2017

Սուտքի խոսք «Ապարանամարտից» դեպի «Հայաստանամարտ»

Հայ ժողովրդի պատմությունը անհնար է պատկերացնել առանց պատերազմների ու ազգային-ազատագրական շարժումների: Ցանկացած դար և դարաշրջան լի է պատերազմներով: Միայն թե ափսոս, որ այդ պատերազմների վերջնական ելքը, որպես կանոն, անհաջող էր լինում մեզ համար: Սակայն հայ ժողովուրդը երբեք չէր հուսահատվում ու անձնատուր լինում, այլ հաջորդ դարում պատրաստ էր մղելու սրբազան մի նոր պատերազմ: Ահա այսպես, անվերջ, անթիվ պատերազմների թոհուբոհում արյուն թափելով, հայ ժողովուրդը ոտք դրեց 20-րդ հարյուրամյակ, որտեղ նրան սպասվում էին նորանոր դժնդակ փորձություններ: Հենց լուսավոր համարվող այդ դարում, մարդկությունը տեսավ համաշխարհային երկու ավերիչ պատերազմներ, որոնց բոցերի մեջ ողջակիզվեցին տասնյակ, միլիոնավոր մարդիկ: Հայ ժողովրդի մի մեծ հատված նույնպես վերոնշյալ պատերազմների նահատակը հանդիսացավ: Առաջին համաշխարհային պատերազմը հարմար առիթ եղավ, որպեսզի թուրք ոճրագործները իրականություն դարձնեին իրենց վաղեմի փայփայած հայասպան քաղաքական նկրտումները: Ցեղասպանության միջոցով երիտթուրքական իշխանություններին հաջողվեց հայաթափել և ամայացնել հայոց պատմական հայրենիքի մեծագույն մասը՝ Արևմտահայաստանը: Հայրենիքն ամայացավ, դատարկվեց, սակայն հայի հոգում այն չմեռավ: Ցեղասպանությունից մազապուրծ հայերի ժառանգները սփռվեցին Արևելյան Հայաստանում և Սփյուռքում: Նրանց հոգում միշտ բորբոքուն մնաց արդար վրիժառության կրակը:

1988 թվականի փետրվարյան զարթոնքով սկսվեց մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը: Եղեռն ապրած հայության նոր սերնդի ներկայացուցիչները զորաշարժի ենթարկեցին իրենց ուժերն ու կարողությունները և Արցախի լեռներում դիմադիր եղան թշնամուն:

Արցախյան ազատամարտը հայ ժողովրդի հաջողված, հաղթական պատասխանն էր թուրք-ազերի ոճրագործներին: Այդ ազատամարտի հերոսական էջերը հետզհետե արտացոլվում են գրական, լրագրային և պատմագիտական գործերում: Այդպիսի մի գործ է ձեռնարկել նվիրյալ մանկավարժ, բանասեր Արմենուհի Ղազարյանը, որն իր արմատներով ապարանյան ծագում և կենսագրություն ունի: Ներկայացվող գործը՝ «Ապարանամարտ» խորհրդանշական վերնագրով, նրա առաջին գրական լուրջ աշխատանքն է: Ինչքանով է այն հաջողված կամ ոչ, թող դատի ընթերցողը: Ինձ հաճելիորեն զարմացնում է մեկ այլ բան, գրող Արմենուհի Ղազարյանի համարձակությունը այսպիսի ընդգրկուն՝ ժամանակաշրջանի առումով, արդիական ու զգայուն՝ հիմնահարցերի ու նրբանկատ մարդկային հարաբերությունների առումով, թեմատիկայի ընտրությունը:

Իսկ գրքում ընթացող դեպքերն ու իրադարձությունները ընդգրկում են Հայոց Մեծ եղեռնից սկսած մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Եղեռնից մազապուրծ եղած ընտանիքի մի մասը անցնում է Արևելահայաստան և Ալեքսանդրապոլով հասնում Ապարան ու այստեղ գտնում իր հանգրվանը: Հեղինակը փորձ է արել իրական կյանքում ապրած, արարած հերոսների (որոնցից շատերին անձամբ ճանաչել է) առօրյա կերպարները համեմել գեղարվեստական լուծումներով, ինչպես նաև իր անձնական համոզմունքները արտահայտելու համար՝ կերտված մտացածին կերպարներով, արտահայտել վերաբերմունքը հայ-հասարակական կյանքի տարբեր երևույթների վերաբերյալ:

Եվ այդ ամենի մեջ ամենաէականը՝ Արցախյան

ազատամարտը իր տեսածի, իր լսածի ու իր ապրածի հիման վրա, սեփական զգացողություններով արտահայտելն է:

Գրքի գլխավոր հերոսը Ֆեդյան է՝ հայկական դարավոր ազատամարտի մերօրյա հերոսներից մեկը: Ֆեդյա Տոնոյանը՝ Ապարանի կամավորական ջոկատի խիզախ հրամանատարը: Ֆեդյան եղեռնից փրկված ընտանիքի երրորդ սերնդի ներկայացուցիչն է: Նա մանկության ու պատանեության տարիներին տատից ու պապից և հատկապես՝ հորաքրոջից անընդմեջ ծանր ու տխուր պատմություններ է լսել իրենց գերդաստանի ապրած սարսափների և, առհասարակ, հայ ժողովրդի մեծ ողբերգության վերաբերյալ:

Ֆեդյան ընտանեկան և հասարակական միջավայրում դաստիարակվել է հայրենասիրական ոգով, որ մի օր իր նախնիների վրեժը պետք է հատուցեր:

Իհարկե, միշտ էլ կարելի է հետին թվով խելացի ու գեղեցիկ բաներ գրել արդեն կայացած այս կամ այն գործի, նվիրյալի մասին, բայց, սիրելի՛ ընթերցող, հավաստիացնում եմ, որ սա այն դեպքը չէ: Այստեղ, այս գրքի յուրաքանչյուր էջ ապրված ճշմարտություն է:

Հեղինակի գերդաստանը և գրքի գլխավոր հերոսի ընտանիքը պապենական խաչքավորներ են եղել: Իսկ թե ինչ է նշանակում մշեցու կամ վանեցու խաչքավորությունը, դժվար է պատկերացնել առանց այդ ամենին մաս կազմելու:

Արմենեուհի Ղազարյանը հասակ է առել, դաստիարակվել վերոնշյալ ընտանիքների բարեկամական սերտ շփումների մթնոլորտում և իր տեսածով, լսածով ու ապրածով դեռ վաղ շրջանից զգացել, իմաստավորել է Ֆեդյայի՝ իր հերոսի, հոգեկան աշխարհի առանձնահատուկ էությունը: Այդպիսի մեկը, այդպիսի մի կերպար, որպիսին Ֆեդյա Տոնոյանն է, անպայմանորեն իր կյանքում պետք է շատ էական հետք ու ազդեցություն թողներ: Դպրոցական հասուն տարիքում Արմենուհին արդեն թղթակցել է

հայրենի Ապարանի շրջանային թերթին, նաև ռադիոյին և ակնածանքով լուսաբանել է Ապարանի կամավորական ջոկատի գործունեությունը:

Արցախյան ազատամարտում Ֆեդյա Տոնոյանը հերոսաբար զոհվեց և հայրենասիրության, հայրենիքին անձնուրացաբար ծառայելու խորհրդանիշ դարձավ սերունդների համար: Իսկ Արմենուհու համար այդ օրերին ծնվեց հաստատակամ որոշում երբեւէ Ֆեդյա Տոնոյանի հերոսական կերպարը արժևորել առանձին գրքով:

Գիրքը գրելու պահը եկավ, երբ երիտասարդ կինը, մայրը արդեն լիարժեք պատկերացումներ ուներ հայ իրականության մեջ հասարակական, սոցիալական, քաղաքական ոլորտներում տիրող, ընթացող գործընթացների վերաբերյալ:

Հեղինակին հաջողվել է գլխավոր հերոս Ֆեդյայի կերպարի շուրջ հավաքել ազգանվիրյաների մի խումբ, որտեղ յուրաքանչյուրն ունի իր ուրույն տեղը, իր գույնն ու երանգը:

Նա գրական հնարքներով ու վարպետությամբ, գեղարվեստական ուրույն լուծումներով փաստավավերագրական չոր անցքերին կարողանում է կենդանի շունչ հաղորդել ինչը բարձրացնում է գրքի որակական արժեքը, այն դարձնում է հաճելի ընթերցանության նյութ:

Օրիգինալության ընգծված դրսևորում է նաև գրքի վերնագիրը՝ «Ապարանամարտ»: Չնայած գրքի վերջում այն վերածվում է Հայաստանամարտի, այնուամենայնիվ զգացվում է տեղական հայրենասիրության դրսևորումը, բայց միանգամայն դրական իմաստով:

Դա բացատրվում է հեղինակի փոքր հայրենիքի՝ Նիգ-Ապարան աշխարհի հանդեպ ունեցած առանձնահատուկ և անսահման սիրով ու նվիրումով, ինչպես նաև այն հանգամանքով, որ Արցախյան ազատամարտի բոլոր նվիրյալներին ինքը ճանաչել է այն մարդկանց կերպարներով, ովքեր ապրել են իրենց գերդաստանի կողքին, հարևան տներում և թաղամասերում, ովքեր մեծացել, հասակ են

առել քավոր Ազատ և մյուս ապարանցի բարեկամների ընտանիքում: Արմենուհին իր կյանքի զգալի մասը ապրել, անցկացրել է այն նվիրյալների շրջապատում, ովքեր ձևավորել են Ապարանի կամավորական ջոկատը և հայրենասիրական գործունեություն ծավալել:

Վերջում ցանկանում եմ վերստին կարևորել, որ այս գրքում կարմիր թելի նման անցնում և իր տրամաբանական ավարտին է հասնում այն միտքն ու գաղափարը, որ հենց Ապարանամարտերից, Արարատամարտերից, Գորիսամարտերից է գոյանում և վիթխարի՛ ու անպարտելի՛ դառնում Հայաստանամարտը:

Մեր ժողովուրդը բացառիկ հերոսականությամբ, ոգու և կամքի հզոր ուժով հաղթեց Արցախյան ազատամարտում և դա շառաչուն ապտակ էր՝ ուղղված 20-րդ դարի դարասկզբի ցեղասպաններին և նրանց մերօրյա ժառանգներին:

Կարդացե՛ք, սիրե՛ք, պահպանե՛ք, ու պաշտպանե՛ք այս գիքն ու նրա հերոսներին:

Այն ևս մի շյուղ է ավելացնում մեր ժողովրդի հայրենասիրության ունեցած պաշարներին:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ լրագրողների միության անդամ, հրապարակախոս